

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ *	
Ոլորտ	SS և հեռահաղորդակցության ոլորտ ^{1****}
1.1 Առավելագույն անգրավ հավասարաչափ մարումների գրաֆիկով վարկային սահմանաչափի Բանկում գործող սահմանաչափերից տարբերություն	+6
1.2 Առավելագույն անգրավ վերականգնվող վարկային սահմանաչափի Բանկում գործող սահմանաչափերից տարբերություն	+4
2. Երաշխավոր	8-ապատիկից և 10-ապատիկից բարձր սահմանաչափերի դեպքում համապատասխանաբար 1 և 2 երաշխավոր(ներ)ի առկայության պայմանով, սակայն. - կամ տրամադրվող վարկի ամսական մարման գումարը չպետք է գերազանցի երաշխավոր(ներ)ի եկամտի (եկամուտների հանրագումարի) 20%-ը; - կամ պետք է վարկավորվեն 250 000 դրամ և ավել աշխատավարձ ստացող հաճախորդները՝ առավելագույնը 3 տարի մարման ժամկետով:
3.1. Առանց վարկունակության ցուցանիշերի հաշվարկման 750 և ավելի նկարագրող սքորի դեպքում հավասարաչափ մարումների գրաֆիկով վարկային սահմանաչափի տրամադրում**	մինչև 3 մլն ՀՀ դրամ
3.2. Առանց վարկունակության ցուցանիշերի հաշվարկման 750 և ավելի նկարագրող սքորի դեպքում վերականգնվող վարկային սահմանաչափի տրամադրում**	մինչև 2 մլն ՀՀ դրամ
4. Վարկային գծի/սպառողական վարկի տոկոսադրույք	ՀՀ դրամ՝ 16%, ԱՄՆ դոլար, Եվրո՝ 15%
5. Անշարժ գույքի գրավով վարկատեսակների համար (հիփոթեք, սպառողական վարկ, վերականգնվող և հավասարաչափ մարումների գրաֆիկով վարկային սահմանաչափեր) Բանկում գործող LTV-ից շեղման չափ	+15%
6. Այլ վարկերի տոկոսադրույք (Բանկում գործող տոկոսադրույքից տարբերություն)	-1%
7. Պերսոնա փաթեթի տարեկան սպասարկման վճար	20,000 ՀՀ դրամ
8. Քարտերի տարեկան սպասարկման վճար (Պերսոնա փաթեթից դուրս)	
Arca Classic	Անվճար
Visa Classic/ MC Standard	Անվճար
Visa Gold/ MC Gold (առանց փաթեթի)***	10,000 ՀՀ դրամ
Visa Platinum/MasterCard Platinum (առանց փաթեթի) ***	25,000 ՀՀ դրամ
9. Ինտերնետ/Մոբայլ բանկինգի տրամադրում (Պերսոնա փաթեթից դուրս)	Անվճար
10. Հեռախոսային բանկինգի ակտիվացում	Անվճար

11. Առանց վարկունակության ցուցանիշերի հաշվարկման կարող է տրամադրվել նախորդ 24 ամիսների ընթացքում Ամերիաբանկում սպասարկած առավելագույն անգրավ վարկային սահմանաչափը, եթե այդ նույն ժամանակահատվածում սպասարկել է բանկի վարկավորման չափանիշներին համապատասխան, վարկը մարվել է առավելագույնը մեկ ամիս առաջ և վարկերի գծով ամսական մարումները չեն աճել ավելի քան 20% -ով:

* Առաջարկը գործում է աշխատավարձը Բանկի միջոցով ստանալու պարագայում:

Աշխատավարձը Բանկի միջոցով չստանալու պարագայում 4-րդ կետով սահմանված վարկային գծի/սպառողական վարկի տոկոսադրույքը սահմանվում է 2%-ով ավել, իսկ 1.1 և 1.2 կետերով կիրառվող սահմանաչափերից տարբերությունը 2-ով պակաս:

Աշխատավարձը Բանկի միջոցով չստանալու դեպքում նվազագույն աշխատավարձը սահմանվում է 250,000 ՀՀ դրամ:

Բանկային ծառայությունները (բացառությամբ վարկավորման) կարող են տրամադրվել նախքան աշխատավարձի տեղափոխելը՝ հիմք ընդունելով հաճախորդների աշխատանքի մասին տեղեկանքը:

Ընդհանուր անգրավ պարտավորությունների առավելագույն սահմանաչափը սահմանվում է վարկային սահմանաչափին համարժեք:

Նվազագույն աշխատավարձը սահմանվում է 99,000 ՀՀ դրամ, բացառությամբ 4-11-րդ կետերի, որոնք կիրառվում են նաև 99,000 ՀՀ դրամից պակաս աշխատավարձ ստացող անձանց համար:

** Ընդհանուր անգրավ պարտավորությունների առավելագույն սահմանաչափը՝ 10 մլն ՀՀ դրամ:

Նվազագույն աշխատավարձը՝ 150,000

**** 4, 6-11-րդ կետերը կիրառելի են նաև Արդարադատության ոլորտի ոչ ղեկավար անձնակազմի համար:

¹Պետական և մասնավոր հատվածում գործող տվյալ ոլորտի ընկերությունների աշխատակիցներ

²Արտաքին գործերի նախարարության կայքում (<http://www.mfa.am/hy/international-organisations/>) տեղադրված կազմակերպությունների և դեսպանատների, ինչպես նաև EBRD, WORLD BANK կազմակերպությունների աշխատակիցներ:

³ Մասնագիտական հաշվապահություն/աուդիտ իրականացնող ընկերությունների և/կամ անհատ ձեռնակատերերի աշխատակիցներ

⁴Ստորև նշված կառույցների ղեկավար անձնակազմին.

- Արդարադատության նախարարության առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումներ,
- Անձնագրային և վիզաների վարչություն,
- Իրավապահ մարմիններ, ներառյալ՝ ոստիկանություն, դատարաններ, դատախազության, ԱԱԾ, քննչական կոմիտե, այդ թվում՝ դատախազներ, դատավորներ, քննիչներ),
- Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ,
- Նոտարական գրասենյակներ (Նոտարներ),
- Փաստաբանական պալատ (նաև փաստաբաններ):

Մասնագիտական իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությունների և/կամ անհատ ձեռնակատերերի աշխատակիցներ

Պաշտպանության ոլորտը ներառում է Պաշտպանության նախարարության, վերջինիս ստորաբաժանումների և Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակիցներին

⁵ Պետական և մասնավոր հատվածում գործող տվյալ ոլորտի ընկերությունների աշխատակիցներ

⁶Պետական և մասնավոր հատվածում գործող տվյալ ոլորտի աշխատակիցներ

⁷Պետական և մասնավոր հատվածում գործող բուհական, հետբուհական և մասնավոր ոլորտի նախադպրոցական, դպրոցական

կազմակերպությունների աշխատակիցներ: